

ՄԱՐԴԸ ԲՆՈՒԹՅԱՆ ՄԻ ՄԱՍՆԻԿ Է



Դեռ վաղ ժամանակաշրջանում մարդիկ սովորել են օգտվել բնության բարիքներից. ընտելացրել են վայրի կենդանիներին, ստացել են մշակաբույսեր, օգտվել են ծովային բարիքներից: Այն ժամանակ մարդը չէր պատկերացնում իր կյանքն առանց բնության: Դրա համար էլ բնությունը նրա համար պաշտամունքի առարկա էր: Նա այնքան էր կապված բնության հետ, որ սովորել էր նրա լեզուն, հասկացել էր նրա գաղտնիքները: Մակայն քաղաքակրթությունը հեռացրեց մարդուն բնությունից, և մոռացվեցին մեր նախապապերի կողմից թողած բոլոր գաղտնիքները: Այժմ էլ մենք կյանքի համար անհրաժեշտ գրեթե բոլոր բարիքները ստանում ենք բնությունից, սակայն առանց սիրելու այն: Մենք անխնա կերպով օգտագործում ենք բոլոր ռեսուրսները: Բայց չէ որ այդ ռեսուրսներն անսահմանափակ չեն: Դրանք անհրաժեշտ են նաև բնությանը: Մտածել էք, թե ինչու են այդքան շատացել բնական աղետները, ինչու են կարմիր գրքում աճել հազվագյուտ կենդանիների և բույսերի թիվը: Միթե՞ մեր մեղքով չէ այդ ամենը:



« Ես էլ եմ ուզում ապրել, ես էլ ունեմ նպատակներ և ունեմ իմ դերն այս կյանքում: Ես էլ պետք է պահեմ ու խնամեմ իմ ձագուկներին: Իսկ դու ոչ նչացնում ես բոլոր միջոցները, ոչ նչացնում ես ինձ և չգիտես, որ ոչ նչացնում ես նաև քեզ: Եթե ես քեզ վնասում եմ, ապա միայն վախից, ինքնապաշտպանության համար: Ի՞նչ դու: Դու ոչ նչացնում ես ինձ, որովհետև ազահ ես անկուշտ, դու շատ փող ես ուզում աշխատել, ուզում ես հարուստ լինել: Իսկ ես ապրել եմ ուզում»:

Մարդիկ սիրեք բնությունը: 4 դասարանի աշակերտ Դանիելյան Լևոն